ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N ԶՏ/01/2320-25 «22» 07 2025թ.

«ՎԻ ՔԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ

«ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԻԿՏՈՐ ՔՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոնայք,

ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի նախագծի ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում տեղակապման, տեղակապված նախագծի հեղինակային հսկողության իրականացման և դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման համար իրականացվել է գնման թիվ A-51AN ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ), որի արդյունքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) և «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ և «Էն Շին» ՍՊԸ ՀԳ-ի միջև 07.04.2025թ. կնքվել է «ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի նախագծի ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում տեղակապման, տեղակապված նախագծի հեղինակային հսկողության իրականացման և դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների գնման» թիվ A-51AN պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.06.2025թ. կայացված թիվ ԵԴ2/3957/02/25 վճռով վճռվել է.

« 1. «Օպտիմում Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Զովեր Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք «Էն Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Վի Քեյ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ մրցույթի հայտերի

գնահատման նիստի արձանագրություն կազմելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք՝ հայցվորների կողմից համատեղ գործունեության կարգով ներկայացված հայտը մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու, հայցվորների համատեղ գործունեությանը մրցույթի հաղթող ճանաչելու, մրցույթի շրջանակներում կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին , բավարարել:

2. Ոչ իրավաչափ ճանաչել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 27.03.2025 թվականին թիվ A-51AN ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման զեկույց (արձանագրություն) կազմելու գործողությունը:

2.1. որպես հետևանք՝ ոչ իրավաչափ ճանաչել թիվ A-51AN ծածկագրով մրցույթի շրջանակներում կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը,

2.2. որպես հետևանք՝ «Զովեր Քնսթրաքշն» ՍՊԸ և «Օպտիմում Գրուպ» ՍՊԸ կողմից համատեղ գործունեության կարգով ներկայացված հայտը գնահատել թիվ A-51AN ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող և բավարար,

2.3. որպես հետևանք՝ «Զովեր Քնսթրաքշն» ՍՊԸ և «Օպտիմում Գրուպ» ՍՊԸ համատեղ գործունեության կարգով հայտ ներկայացրած մասնակցի ճանաչել թիվ A-51AN ծածկագրով մրցույթի հաղթող,

2.4. որպես հետևանք՝ պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին թիվ A-51AN ծածկագրով մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքել «Զովեր Քնսթրաքշն» ՍՊԸ և «Օպտիմում Գրուպ» ՍՊԸ համատեղ գործունեության կարգով հայտ ներկայացրած մասնակցի հետ՝ որպես թիվ A-51AN ծածկագրով մրցույթի հաղթողի:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից հօգուտ «Օպտիմում Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Զովեր Քնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը մնացած մասով համարել լուծված:»:

Հաշվի առնելով, որ վճիռը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից, ենթակա է պարտադիր կատարման և ղեկավարվելով Պայմանագրի «Պայմանագրի ընդհանուր դրույթներ» բաժնի «G. Պայմանագրի ավարտը» ենթաբաժնի 75-րդ կետի դրույթներով՝ Հիմնադրամի և «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ և «Էն Շին ՍՊԸ» ՀԳ-ի միջև 07.04.2025 թվականին կնքված թիվ A-51AN պայմանագիրը 21.07.2025 թվականից համարվում է միակողմանիորեն լուծված:

Առաջարկում ենք պայմանագրի շրջանակներում տրամադրված 183,836,394.0 ՀՀ դրամ կանխավճարը սույն ծանուցումը ստանալուց հետո 25 օրյա ժամկետում փոխանցել ՀՀ Կենտրոնական գանձապետարանի նշված հաշվեհամարներին հետևյալ համամասնությամբ՝ նպատակ դաշտում նշելով «թիվ A-51 AN պայմանագրով տրամադրված կանխավճարի վերադարձ»:

900000911710 - 153,196,995.0 ՀՀ դրամ

900000911728 - 30,639,399.0 ՀՀ դրամ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

7/22/2025

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ X **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝
ՀՏՀՀ իրավաբանական վարչություն
Հեռախոս՝ (060) 50 15 60 (153, 155)